ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 179 – Ա **01 ապրիլի 2021 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային վարչության 2021 թվականի մարտի 22-ի N 50 գրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2006 թվականից մինչև 2015 թվականի ապրիլի 5-ը ըստ հաստատված նախահաշիվների կատարված ֆինանսական ծախսերն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գոռ Ղազարյան	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ
Մհեր Կյուրեղյան	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
Դավիթ Սահակյան	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրությունների արդյունքները 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

01.04.2021

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ